



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՁԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 2 ՅՈՒԼԻՍ 1911

ԹԻ 25

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արիւնոտ վերարկուն (Տէր Սարգիսի յիշատակին)
Անէ՛ծք (քերթուած)

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ՄԵԾՄԴՈՅՆ ԽՈՂՆԵՐԷ. —
Ժամանակը

«Տաճար»ի լուսաբանութիւնները

ՈՍԿԵԴԱՐՈՒ ՄԵՇ ԴԻԻՑԱԶՆԵՐԸ. — Ս. Սահակ
եւ Մեսրոպ

Սահակ Մեսրոպ (քերթուած)

ՄՈՌՅՈՒՄԷ ԷՋԵՐ. — Ս. Մեսրոպի դամբարանը

ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊՍՄՊԻԼԻՈՍ. — Առաջին Գրիստոնեա-
նեցու ժամանակիւնն ալստմուտիւն թար.)

«Կը սիրեմ կուսակցութիւնները»

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան լուրեր

ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՆ
ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿ. ՍՄԱԿԱՆ

ԽԱԶԻՍԱՐ
ԽՄԲ.

ՍԻՐԱՔ ԶԱՆ

Ա. ՏՈՒՐԻԿԵԱՆ

ԵՂԻՇԷ ՍՐՔԵՊ. ԴԱՎԵԱՆ

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

ՔԶՆՅ

Տպագր. Ց. ՏՕՂՐԱՄՍՃԵԱՆ

Սուրբան-Համալ Մօղս-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 2 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻԻ 25

ԱՔԻԻՆՈՏ ՎԵՐԱՐԿՈՒՆ

(ՏԵՐ ՍԱՐԳԻՍԻ ՅԵՇԱՍՏԱԿԻՆ)

Բաղէչի Սոյթ գաւառակի թաղվանք
գիւղի անփառունակ քահանայն էր Տէր
Սարգիս:

Գիւղին համայնամէջ ինչ էր ան, քահանայ, բժիշկ, հանուցիչ, դատաւոր, իրաւաբար, վերջապէս պահապան հրեշտակը իր ամբողջ հոգովն ժողովուրդին անոր հանդէպ տածած յարգանքի ու պաշտելութեան անաւելութիւնը, մանաւանդ ականատեսի մը համար հետաքրքրական էր ու ապշեցուցիչ յարգանք մը, պաշտելութիւն մը, որուն արժանի են իսկապէս նման հովիւներ, որոնք կատարեալապէս մարմնացումը բարոյականի, անձնուիրութեան ու անձնազոհութեան, միշտ պատրաստակամ եղած են ամենքիւ, միտքաբերու, վշտակցելու եւ փութալու համար հոն ուր կը կոչէ զիրենք ժողովուրդին պէտքն ու ծայրը Արգարեւ Տէր Սարգիսի բոլոր ժողովուրդը եւ ծանօթները — ինչպէս կը վկայեն — իր մէջ դրած են նկարագիր մը տոկուն, սիրտ մը բարախուն, երիտասարդութիւն մը վառվռուն եւ էութիւն մը զգայուն:

Այս գերազանց յատկութիւնները հետզհետէ կ'ընդլայնեն իր ծանօթներուն եւ բարեկամներուն շրջանակը, եւ անա կարծ ժամանակի մը մէջ Տէր Սարգիս կը դառնայ օրուան անհրաժեշտ ու պաշտելի մարդը: Նա իբրեւ քաջարի հովիւ իր բուն մը հօտէն զատ զրացի անհովիւ հօտերն ալ կը սկսի պաշտպանել արեւելիցալ ու պատառող զայլերու յարձակումներէն:

Դժբախտաբար, սակայն, այս արի ու բարի քահանային կրակ ու բոց բնաւորութիւնն եւ օգտաշատ գործունէութիւնը անհաճոյ կը թուին օրուան հին Ռէժիմի կանաւարութեան: Սիւթէ մաթիք հալածանքը կը սկսի իրեն դէմ Ամէն ճիգ կը թնկուի ճնշելու, հարստահարելու եւ ոչնչացնելու համար թաղվանք գիւղը, եւ այս կերպով անգործութեան եւ յուսահատութեան մասնելու Տէր Սարգիսը:

Սակայն «այս տրուած դասէն բան մը չի հասկնար», ինչպէս կ'ըսէ Թորի ինք իր ծանօթներուն: Բռնակալութեան ամբողջ շղթաներու պրկումները կարծես աւելի կը բազմապատկեն իր ոյժին չափն ու թափը, ու Տէր Սարգիս վիշտերու ու տանջանքներու այդ բովէն դուրս կուգայ աւելի զօրացած ու զօտեպնդուած, ջախջախելու համար իր հօտին սպաննացող գազաններուն ժանիքները:

«Ա՛խ, սեւ բախտ եւ սեւ օրեր» : Իր միակ յանկերդը, զոր կը կրկնէ եղեր միշտ արտասուելից աչքերով : Կողեկան տագնապալից վայրկեաններու եւ տխուր տպաւորութիւններու տակ արտասանուած խօսքեր, որոնք ուէ ստուեր չեն ամեր բնաւ իր նման պարտականութեան գիտակցութիւնը ունեցող անձնաւորութեանց ցայտուն նկարագրին եւ փառաւոր գործունէութեան վրայ : Ստոյգ է որ երեսուն երեք տարիներ շարունակ իր հօտին հետ կ'ունենայ «սեւ բախտ» եւ կ'ապրի «սեւ օրեր», բայց անկարելին կ'ընէ «սեւ բախտ»ը բախտաւորութեանց եւ «սեւ օրերը» պայծառ օրերու վերածելու համար :

Հին Ռէժիմը, այս յարածուն գործունէութեամբ տողորուած մարդուն հակադրելու, եւ ի հեծուկս անոր՝ Թաղվանք գիւղը միանգամ ընդ միշտ փնայնելու նպատակաւ, կը զրդէ Բէլլըցի Աշխրէթի պետերէն Հաճի Օմէրը՝ նոյն գիւղի հողերուն ոտնձգութիւն ընելու համար : Նպատակայարմար ծրագիր, որ կը գործադրուի իսկոյն յիշեալին կողմանէ : Տէր Սարգիս, ծանօթ բոլոր իրադարձութեանց, ինք ալ իր կարգին տարբեր ծրագրով մը կը զինուի յիշեալ քուրդերուն դէմ : Բայց այս անգամ իր հողագուրկ հօտին թշուառութեան ի տես՝ յուսահատութենէն կ'ընկճի, եւ սրտմաշութենէն կը տուժէ իր ֆիզիքական կազմը :

Ասանձադրութեան վերահռչակումով սակայն՝ իր յուսահատութեան տխուր օրերուն շուտ կը յաջորդեն յոյսի եւ ուրախութեան վայրկեանները :

Տէր Սարգիս վերառոյգ կ'հանքով եւ աշխոյժ գործունէութեամբ հրապարակ կը նետուի դարձեալ : Կառավարութեան կը դիմէ իսկոյն եւ կը բողբէ յիշեալ քուրդ Օմէրի եւ իրեններուն դէմ : Կառավարութիւնը՝ յետ երկար քննութեան եւ քուրդերու ներկայութեան՝ խնդիրը կը լուծէ ի նպաստ Տէր Սարգիսի եւ իր ժողովուրդին :

— Կեդրոնի սահմանադրական կառավարութեան այս արդար որոշումը զայրոյթ

կը պատճառէ Օմէրի եւ իրեններուն, ուրոնք սա սպառնալիքը կ'ընեն :

— Կառավարութիւնը ձեզ կը պաշտպանէ, բայց մենք ո՛չ կառավարութիւն կը ճանչնանք ոչ օրէնք, ամէն ինչ սա՛ մեր հրապանի ծայրն է . . .

Եւ այս՝ շուկային մէջ տեղի կ'ունենայ ինչպէս տէր Սարգիս կ'անխաղագուժով մը իր բարեկամներուն եւ առաջնորդարարի մէջ կ'ըսէ :

— Անգամ մըն ալ չեմ յուսար որ ողջ քաղաք դամ :

Քաղաքիս լուսամտիս եւ բարի կուսակալը՝ Հագգը պէյ, կը սրտապնդէ քահանան, բայց ի դուր Օմէր՝ գիւղ հասնելուն՝ կը սկսի իր նախկին ընթացքը : Պաշտօնատեղիս, այս ցաւի, վիշտի եւ արցունքի երկիրը, հաղիւ հասած՝ լսեցի այս դառն իրողութիւնները, ինչպէս նաեւ Տէր Սարգիսի կ'հանքն ու գործունէութիւնը : Անգուսպ մարմաջ մը ունեցայ տեսնելու համար այս քահանան եւ համբոյրներ դրոշմելու իր ճակտին : Ինք եւս նորեկ Առաջնորդիս, ըստ սովորութեան, բարի գալուստ մաղթելու կը փութայ Բաղէշ երկու պատուաւոր գիւղացիներով :

«Իրենց ցաւին ցաւակից եւ վշտին վշտակից ու պաշտպան» Առաջնորդը եկած էր, եւ այդ խանդավառ յոյսով կը գիմեն դէպի կեդրոն :

Օմէր եւ իր ընկերները լսելով Տէր Սարգիսի մեկնումը, դարանակալ կը սպասեն Սարէզին կոչուած վայրը :

Առաւօտուն — ինչպէս արտասուելից աչքերով կը պատմէր ինձ մաղապուր ապրող իր ընկերներէն մին — Տ, Սարգիս «Առաւօտ լուսոյ» ի երգը ի բերան, հաղիւ կը հասնի Սարէզին սարը, եւ ահա կը սկսի հրապաններու պայթիւնը : Տէր Սարգիս, առանց իր պաղարիւնութիւնը կորսնցնելու, կը ջանայ խոյս տալ : Բայց քնտակ մը գիտին կը փռէ գիւղը : Ոճրագործ ճիւղարարածները կը խոյանան քահանայի կէս անչնչացեալ դիակին վրայ, անդիօրէն կը խողովողեն վայն՝ բզիկ բզիկ ընելու աստիճան, եւ ի լրումն ամենայն դադա-

նութեան, կ'այրեն, մոխիր չը դարձնեն զայն . . .

Իսկ ես — ո՛հ, ի՜նչ դժոխային զուգահեռութիւն — նոյն օրը եւ թերեւս խող-խողման նոյն վայրկեանին, փոխանորդէս՝ Տէր Սարգիսի ուշանալուն մասին բացատրութիւն կը պահանջեմ:

Հետեւեալ օրը դաջձեալ կը հարցնեմ, եւ երեկոյեան մօտ, ո՛հ, փոխան Տէր Սարգիսը անձամբ տեսնելու, անոր աշխատանքները կը բերեն ինծի: Կեանքիս մէջ չեմ յուսար որ այնքան ահաբեկող տարտալիտեմ եւ այնքան դառն ու տխուր տպաւորութիւն կրած ըլլամ . . .

Առաջնորդական պաշտօնիս գլուխը հազիւ հասած, աշխատանքները մեր կը մատուցուէր ինձ . . . Կախարհային տեսարան:

Առի՛, ձեռք առի արիւնոտ վերաբերուի. կուրծքս լեցում էր, խեղդուելու աստիճան կը տանջուէր . . . ա՛յ չկրցայ բռնել յուզումս, եւ արցունքներս պոսթկացին. եւ ուղեցի որ պոսթկան. արցունքներէս թրջուած ու վերաբերուի արիւններէն տրիւնոտած ձեռքերով անգիտակցաբար օծեցի աչքերս, երբ կը սրբէի զանոնք: Ա՛հ, ի՜նչեր, ի՜նչեր խօսեցաւ այդ վերաբերուի ինծի, ի՜նչ տխուր տեսարաններ պարզեց աչքերուս առջեւ: Ազգիս աննկարագրելի վիշտերը պատկերացնող քարտէս մըն էր ան. հո՛ն լեռներ կը տեսնէի Հայուն խողովոցով զիսկնէրովը կազմուած, հո՛ն դաշտեր կը տեսնէի այուն ասկորներովը ցանցուած, հո՛ն ծովեր կը տեսնէի Հայուն արիւնովը ներկուած, հո՛ն լիճեր կը տեսնէի Հայուն արցունքներովը լրթացած, հո՛ն բարձրագիւր ժայռեր կը տեսնէի Հայուն բողբոջներովը քարայցած, հո՛ն բոյսեր ու ծառեր կը տեսնէի, որոնք Հայուն արիւնոտ արցունքներու շիթերը կը չիթէին: Քոտմեցուցի՛չ, զարհուրելի, բայց ճիշտ պատկեր մըն էր այդ սեւ վերաբերուի: Ազգիս ճակատագրին պէս սեւ էր ան, սրտին պէս քնտաւահար, բզբատուած, ու էութեանը պէս այրուած ու մերկուած . . . Անոր ծաղկերէն Հայուն յաւիտեանական բողբոջը կ'արձագանգէր,

ողբը կը թնդար եւ անէծքը կը ժայթքէր: Անոր ծաղկերուն մէջ պահ մը պարուռած կը տեսնէի Տէր Սարգիսի քաջարի կազմն ու դէմքը, որ եկած առաջին յարգանքը կը մատուցանէր իր «Առաջնորդ Հայր Սուրբին», եւ առնական դու ձայնով մը բողբոջ կը բառնար Օմէրի դէմ:

Ու այսպէս ժամեր շարունակ արցունքը աչքիս, ապշած միացի վերաբերուի ի ձեռքին . . . բայց, աւա՛ղ, տխուր իրականութեան մը առջեւ կը գտնուէի: Տէր Սարգիս ո՛չ եւս էր:

Ու սրաէ՛ս բացագանչեցի:

— Պարտականութեանդ զաշտին վրայ ինկար, անչնչացար, ո՛վ քաջարի զինուոր: Երեսուն երեք տարիներ շարունակ մաքսոնցար ափ մը ժողովուրդիդ համար, տանջուեցար ու շարշարուեցար: Ինձ նուիրութեան մարմնացումն էիր դուն, ո՛վ պաշտօնեայդ Եկեղեցւոյ, ըրիր ինչ որ կարելի էր, գործեցիր ինչ սր խիղճդ կը տրամադրէր, սիրեցիր որքան սիրող կը բարախէր, ուսուցիր որքան մտային ոյժդ կը ներէր, եւ պաշտպանեցիր քեզի յանձնուած հօտը, հետեւելով հովուապետիդ Յիսուսի: Ես ալ կը փափաքէի տեսնել զքեզ ու կը սպասէի. բայց ի՜նչ դժիւր ըստ, Աստուած իմ, քու ժամանումիդ լուրին տեղ, սրտի բղբատումով լսեցի մահուանդ բօթը, եւ արտաստալից աչքերով տեսայ արիւնոտ վերաբերուի, որ չա՛տ պերճախօս էր ու չա՛տ բաներ խօսեցաւ ինծի . . . Ինծի հա՛նար պաշտելի մասունք մըն է ան, որուն ծակտիքներէն կը բուրեն Սարգիսի սարին վրայ խարոյկաբարձ գիակիգ ճենճերումները: Ժողովուրդիդ համար այրուեցար, մրկուեցար, զոհուեցար . . . ընթացքդ կատարեցիր, հաւատքդ պահեցիր, այսուհետեւ փառաց պսակը կը մնայ քեզի . . .

Հանգի՛ր ուրեմն, ո՛վ մեծահոգի, անձնուէր ու պաշտելի քահանայ: Աստուծոյ հանգիստ բոցերու լափիլզումն աղատած ասկորներուդ, եւ համբո՛յր Սարգիսի սարին ուր ճենճերուեցաւ մարմնիդ եւ ուրկէ ինձ եկաւ — իբրեւ առաջին նուէր—քու Առիւնոս վերադարձ:

ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՆ

Բաղէշ

Մէկ անգամէն միայն մէկ գործ կատարել : Ասիկա շատ կարեւոր է . ճշմարտագէտ նշանաւոր մարդը նա է որ կրնայ կեդրոնացնել իր բոլոր ուշադրութիւնը մէկ բանի վրայ, եւ կը մոռնայ բոլոր ունեցածը : Կեդրոնացումը միծաղոյն ոյժն է մարդկային մտքին :

Անցելոյն . մէջ որ մեզմէ կը խուսափի, եւ ապագային մէջ զոր կ'անգիտենք, ներկան է ուր պարտականութիւններ ունինք կատարելու :

Առաւօտն օրուան պատանկութիւնն է, ամէն ինչ թարմ է ծիծաղկոտ եւ դիւրին, զմեզ աւելի ուժեղ եւ տրամադիր կ'ըզգանք, մեր կարողութիւնք աւելի ի մեզ են, պէտք չէ կարճեցնել իր ժամանակն ու չ'վեր կ'ընալով կամ անտրամադրումներով եւ պարապ խօսակցութիւններով, անկայ կեանքին ուղղ եւ ծուծն է . իրիկունն ընդհանկառակն օրուան զթուաբութիւնն է :

Ժամանակն ինչպէս որ կը փոխէ աւելի քան, կը փոխէ նաեւ մեր բնաւորութիւնները : Իւրաքանչիւր սարիք իր հանգքներն, իր միտքն ու իր բարքերն ունի :

Ժամանակը բժիշկ է լաւագոյն փորձառութեամբ . իր դեղը դանդաղկոտ է բայց շատ անվրէպ :

Ժամանակը մեծագոյն նորոյթակերտն է :

Մարդիկ կան որ չեն գիտեր կորսնցնել իրենց ժամանակը, գոնէ միայնակ : Զրազեալ մարդոց պատուհան են անոնք :

Անզդիական առածը կ'ըսէ. «Ժամանակն արծաթ է» :

Գործի մարդոց մէջ սովորութիւն է ըսել թէ «Ժամանակն արծաթ է» . բայց իրապէս ասկից աւելին է, վասն զի եթէ գիտնան լաւ գործածել զայն, անձին մը

շակութիւնն է, քարելաւումն է, նկարագրի կազմութիւնն է : Իւրաքանչիւր օր մէկ ժամ, որ անհոգութեան կամ ոչինչ բաներու կը արուի, մի քանի տարուան մէջ եթէ անձին կատարելագործման նուիրուէր, ազէտ մը իմաստուն պիտի դառնար, եւ բարի գործերու յատկացուելով պիտի արգասաւորէր մարդուս կեանքը, կ'ըսէ Սամուէլ Սմայլս :

«Կեանքի մէջ բոլոր իմ յաջողութիւններս կը պարտիմ, կ'ըսէր Նէլսըն՝ անգլիացի մեծ ծովակալը, այն բանին որ միշտ եւ ամեն բանի մէջ քառորդ ժամ մը առաջ հասած եմ» :

Քաղեց ԽԱՉԻՍԱՐ

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ ՍԵՍՐՈՊ

ՈՍԿԵՂԱՐՈՒ ԵՐԿՈՒ ԴԻԻՑԱՋՆԵՐԸ

Ամէն քաղաքակիրթ ազգի բարոյական, ընկերական եւ քաղաքական յառաջդիմութեան եւ զարգացման գլխաւոր ազդակն է եղած մտաւոր կրթութիւնը : Մեր անդիր մատենագրութեան փայլուն գուհարներէն յետոյ՝ որ գեղեցիկ նշույններ կ'արձակեն մեր խաւար անցեալին մէջ, մտաւոր կեանքը, գրական ճշմարիտ կեանքը ծաղկեցաւ ձեռներէցութեամբ երկու մեծ հանճարներու՝ Ս. Սահակայ եւ Ս. Մեսրոպայ՝ որոնք պինդ սեւեռած աչքերնին յառաջդիմութեան բարձրագոյն տեսլականին, ծնան հայ գրականութիւնը : Հայ ազգութեան դրական կազմակերպութեան եւ աստիճանական զարգացման պատմութիւնը ցոյց կուտայ մեզ թէ, նախաքրիստոնէական դարերէն մինչեւ քրիստոնէական կրօնի թուականները եւ մինչեւ Ե. դարու սկիզբը, հայ հասարակութիւնը, զուրկ մտաւորական գործունէութեան մը բարիքներէն, տակաւին բնապաշտ կրօնի մը մշուշնիրով ծածկուած էր, առանց ներքին կրօնական ծաղկեալ կեանքի մը :

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, Որքան անոյշ կը հնչեն մեր ականջներուն Հայոց աշխարհի կրթութեան եւ լուսաւորութեան գլխաւոր ազդակները հանդիսացող այս երկու մեծագոյն եւ երկւելի սուրբերու անուաները, որոնք իսպառ հրաժարելով աշխարհային կեանքի գուարճութիւններէ, սիրով եւ յօժարութեամբ յանձն առին կրօնաւորի սքեմը, եւ չնորհիւ իրենց եռանդուն գործունէութեան, հաստատուն սիւները հանդիսացան Հայաստանեայց առաքելական Եկեղեցիին:

Իրենց բովանդակ կեանքի եւ գործունէութեան մէջ միշտ զուգընթաց են, համաձայն, միասին եւ միակրօն: Առաջինը՝ պարթեական տոհմի շառաւիղ՝ իր մեծահոգի հօր հովանաւորութեան տակ ընտիր դաստիարակութիւն մը ստացած, իսկ երկրորդը՝ անշուք դիւղի մը մաքուր եւ ազատ մթնոլորտին ներքեւ ծաղկած՝ պալատական բարձր պաշտօնէ մը բարձրացած էր արժանաւորապէս կրօնական աստիճանի:

Ի՞նչ էր իրենց նշանաբանը. — Իսպառ ջնջել Հայաստանի խոր անկիւններէն հեթանոսութեան հետքերը, պատրաստել բանիբուն եւ լուսամբտ կղերականաց խումբեր, եւ ստեղծել մանաւանդ հայկական զիրը, որ ազգային, կրօնական եւ դրական կեանքի մը հնարաւորութեան պայմանները յառաջ պիտի բերէր:

Ճշմարիտ կրօնը եւ ճշմարիտ գիտութիւնը, լայնօրէն խորհելով, երկուորեակ քոյրեր են: Մարդկային միտքը եւ սիրտը՝ յօդաւորուած են իրարու ոսկեթել կապերով: Ճշմարիտ դաստիարակութեան գործն է մշակել միտքը որ բանաւոր էակին զօրութիւնն է, կրթել սիրտը որ մարդկային զգացմանց վառարանն է: Ան կը պայծառացնէ բարւոյն եւ ճշմարտին գիտակցութիւնը, եւ կը հաստատէ բարիար հաւասարակշռութիւնը խորհուրդներու եւ զգացումներու մէջ: Արդարեւ որո՞նք եւ ի՞նչ բաներ են եղած անհատին ներքին մարդը կազմող միջոցն ու նպատակը, եթէ ոչ, քաջել հանել զայն իր եւին սահմանափակ վիճակէն, գիտակից ընել մարդ-

կութեան ընկերական, իմացական, եւ բարոյական կեանքին, զերծ պահել անձուկ եաստիրութենէ եւ մոլեռանդ ատելութենէ, ընդլայնել սիրտը, մեծցնել անոր մտաւորական կարողութեան շրջանակը, եւ վերջապէս պատկերացնել շատ յստակօրէն անոր երեւակայութեան առջեւ իր ազգին անցեալին մէջ ունեցած նշանաւոր դէպքերը եւ երեւելի անձնաւորութիւնները:

Արդեօք ի՞նչ վախճանի պիտի յանգէր հայ դրականութեան ապագայ ճակատագիրը, եթէ երբեք զոյգութիւն չունենային ազգային այս երկու մեծ անձնաւորութիւնները՝ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, եթէ մեր ոսկեղարը նմանողական յաջորդութիւն մ'ըլլար նախորդ դարերու. — Ո՛վ գիտէ, թերեւ մատենագրական յաւիտեական ամլութիւն մը, կամ գրական եւ կրօնական մեծ անկում մը: Արդեօք պիտի կարենայինք ծանօթանալ նախաքրիստոնէական դարաշրջաններու մէջ հայ ազգութեան կացութեան, որ այսօր շատ տարտամ ու չիփթ հանգամանքն'րով կը ներկայանայ մեզ:

Արդարեւ, շատ դարմանալի չենք գտներ այսպիսի անակնկալ եւ հսկայաքայլ մտաւոր կրօնական եւ կրթական շարժում մը զոր կը ներկայացնէ բաւական յստակութեամբ մեր Ոսկեղարը՝ չնորհիւ զուգակից մեծ հանճարնեքու, որոնց յիշատակը դարէ դար, սերունդէ սերունդ միշտ վառ եւ անմոռաց պիտի պահուի հայ դաւակաց հոգւոյն եւ սրտին խորը: Երախտագիտութեան եւ պատկառանքի մեծ հիացումով մը պէտք է ծնրադրենք անոնց առջեւ:

Հայ Եկեղեցին շա՛տ իրաւամբ եւ երախտագիտութեամբ օր մը յատկացուցած է անոնց յիշատակին, որոնք հայկական նորագիւտ տառերու չնորհիւ քակեցին անլուծելի հանգոյցը, եւ բացին հայ հասարակութեան առջեւ մտաւոր եւ բարոյական գործունէութեան ընդարձակ ասպարէզ մը:

Իրենց նախնական քայլերուն մէջ ձեռք բերած յաջողութիւնը կը խրախուսէ

Աւետարանի հոգիով բողոքաւորուած ամուսնեւոր, որով իբրեւ ըրիստոնէական կրօնի ճշմարիտ առաքեալներ՝ կ'ուզեն ազատել հայ ժողովուրդը տգիտութեան ճերաններէն, եւ Հայ Եկեղեցին՝ ասորական եւ յունական բռնապետութենէ : Սակայն աւա՛ղ որ, մար քաղաքական անկումը կը գայթեցնէ եւ կը տկարացնէ մասւորական այդ գործունէութիւնը : Հայոց թագաւորական գահուն վրայ բարձրացող երիտասարդ Արտաշրի անփորձ եւ անվայել կեանքը պատճառ կըլլայ Պարթեւադուն հայրապետի աղեկէզ եւ ջերմ արտասուքներուն : Ան որ Ոսկեդարու գեղեցիկ արշալոյսի մը հմայիչ շողերը փայլեցուցած էր իր ոսկեղինիկ գրչով, անմիտօրէն եւ արտասուաթոր, մութ ամպերու սեւեռած իր աչքերը՝ հրաժեշտ կուտայ իր արդիւնաւոր կեանքին : Եւ ահա անմիջապէս վերջ՝ մահուան անգութ հարուածը կը տապալէ նաեւ անոր զսւզակից եւ անբաժան ընկերը՝ երանելին Մեսրոպ, կարծես հանդերձեալին մէջ ալ միասին վալելիլու յաւիտենական կեանքի անմահութեան փառապսակը :

Թո՛ղ պանծան յաւէտ Աշտիշատ եւ Օշական՝ այս երկու մեծ դիւցազներու քնարանները, եւ թո՛ղ մեզ՝ հայ զաւակներուս համար նուիրական պարտականութիւն մ'ըլլայ միշտ վառ եւ անմռաց պահել անոնց սուրբ եւ պատուական յիշատակը :

Յարգանք իրենց փառաւոր անուան, յարգանք իրենց անմահ յիշատակին, որ միշտ ուժգին պիտի թրթռացնէ ամէն հայու սիրտ :

ՍԻՐԱՔ-ՋԱՆ

Մարտ

«ՏԱՃԱՐ»Ի ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պրուսայէն Տ. Իգնատիոս Բիլյ. Բիլիմկան հետեւեալ հարցումը կ'ուղղէ մեզ. —

«Նաւակատիքը իբր օրէնք պէ՞տք է զործադրել կղերի մը համար, իր Պատա-

րագի նախորդ օրը նաւակատիք բռնելով : Տեսած եմ մեծ մասամբ կղերականներ որոնք իբր օրէնք խղճի մասը կը կատարեն, իսկ շատեր ալ երբեք կարեւորութիւն չեն ընծայեր : Եթէ օրէնք է ինչո՞ւ ամէն կղեր ենթակայ չըլլայ այն օրէնքին, ինչու որ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրէնքներն ու ծէսերը ոչ թէ մասնաւորներու այլ ընդհանուրին համար կարգադրուած են կարծեմ :

Պատասխան. — Շատ պարզ է Արժ. Տ. Հօր տրուելիք պատասխանը : Որչափ մինք գիտենք, Հայ. Ս. Եկեղեցւոյ կանոնադրներուն մէջ ունէ պատուէր չկայ ժամարար քահանային համար՝ իր Պատարագի նախորդ օրը նաւակատիք պահելու : Եթէ կը գտնուին քահանաներ որ կամաւոր կերպով այդպիսի պահեցողութիւն մը կ'ընեն, այդ իրենց կամքէն կախեալ է, բայց չպահողները օրինազանց չեն ըլլաւ : Գովելով հանդերձ նաւակատիք բռնողներու ընթացքը, ինչ որ կ'ենթադրենք թէ արդիւնք է Եկեղեցւոյ նուիրական մէկ խորհուրդին արժանաւորապէս մօտենալու փափաքին, մենք համարձակօրէն կ'ըսենք որ աղէ շատ աւելի կարեւոր է սրտի մաքրութիւնը, կատարեալ հաւատքը Բրիստոնէական կրօնքին եւ անոր սրբազան Խորհուրդներուն վրայ : Երջանիկ պիտի ըլլայինք, եթէ կարենայինք համոզում գոյացնել թէ մեր բոլոր քահանայ եղբայրներն ալ ունին այդ խորունկ հաւատքը : Սիրելի Տէր Հայրը կամաւոր նաւակատիքի պահեցողութեան հաւասարապէս ենթարկուած կ'ուղէ տեսնել քահանաները : Ո՛ր էր թէ չգըտնուէին այնպիսիներ, որոնք հայրապետադիր Պահքերն իսկ կը լուծեն, եւ գուցէ աւելին իսկ կ'ընեն, սեղանի չափազանցութիւններու մէջ խնալով, եւ յաջորդ առտուն առանց դոյզն խղճի խայթի կը մօտենան Ս. Պատարագի Խորհուրդին, գայթակղութեան պատճառաւ դառնալով հաւատացեալ ժողովուրդին :



Ս Ա Շ Ա Կ—Մ Ե Ս Ր Ո Պ



րկնէր Մասիս, երկնէր երասխ, երկնէր ծովակ Գեղամայ.
 Լուած էին հիւսիս, հարաւ. վայրագ հովերն ակամայ
 Կը շնչէին մեղմանուշիկ արեւելքէն ու մուտքէն,
 Սիւք ու զեփիւռ երգակցելով իրենց խորին հրճուանքէն:
 Հրրեշտակաց պարք խմբովին ոսկի քնար ի ձեռին՝
 Թողլով իրենց վերին կայան՝ Մասեաց գագաթ-ճախրէին:
 երկինք, երկիր կային յակճիւ նորատեսիլ այս շարժման
 Ակնածանօք սպասելով թէ ի՞նչ պիտ' գար երեւան:
 Գոռաց յանկարծ Մասիս ուժգին, ու իր երկու կողերէն.
 երկու հսկայ պերճ գլուխներ հանդիսապէս դուրս կ'ելնէն:
 Ծիւանի ծով սէգ Գեղամայ փուծայ ծիշան իր բեհեզ
 Ձգել անոնց մերկ ուսերուն՝ մետաքսահիւս քողի պէս.
 Իսկ գոռ երասխ իր վէտվէտուն ալիքներով կը փուծայ
 Կապել անոնց նուրբ մէջքերուն մէջ մէկ գօտի արծաթեայ:
 Զրարթնոց պարք ալ կը սկսին լարել իրենց քնարներ՝
 Որոնց վրայ վեր վար շարժին իրենց ճարտար լոյս մատներ:
 Արեւ վերէն վար կը հոսէր բիւր բիւր շողեր ու կայծեր,
 Իր ջերուցիչ ամբիժ լուսով օծել անոնց մարմիններ:
 Ցնծուծեան մէջ են Արագած, Վարագ, Նեբրովթ, Արարատ,
 Խայտան երասխ, Տիգրիս, Ճորոխ, Ալիս, Իրիս ու Եփրատ.
 Արամայ Տուն ծայրէ ի ծայր տօն ու հանդէս կատարուի
 Հպրստանիքի խնջոյք կարծես ամենուրեք կը տրուի:
 Զի գիտուծեան քաջ ախոյեան զոյգ մը հերոս գլուխներ
 երկնակարկառ վեհ Արարատ իր խոր ծոցէն հանած էր,
 Ոք շողալով գերթ վառ կանթեղը հորիզոնին մեր վերեւ
 Խաւարային սեւ խորհուրդներ պիտ' հանէին ի դերեւ:
 Սահակ էր մին այս երկուքէն, մեր սրբազան հայրապետ,
 Մեսրոպլն էր մեծ միւս երկրորդ մեծահանճար վարդապետ,
 Որոնց առջեւ ծունր դրած ոգին ամբողջ Հայունեան
 Դիտէր զանոնք, պաշտէր զանոնք զմայլումով անսահման:
 Դարերու մէջ հազիւ երբէք բախտ կ'ունենան երկիրներ
 Ողջունելու իրենց մէջը ասանկ չքնաղ տաղանդներ,
 Որք կարենան ազգ մը ողջոյն իրենց երկանց արդիւնքով
 Կանգուն պահել դարէ ի դար վտանգներէ ապահով:
 Իր գոյութիւն անոնց պարտի Հայը այսօր անկասկած,
 Իր գոյութիւն վաղն ալ նոյնպէս Այբուբենէն է կախուած:
 Ցորչափ կանգուն մնան ի մեզ երեսունվեց հայ տառեր՝
 Պիտի ապրինք երկրի վրայ մենք ալ այնչափ շատ դարեր:
 Թո՛ղ ուրեմն մնայ յաւէտ իրենց անմահ յիշատակ,
 երախտագէտ մեր սրտերու խորերուն խոր ծալքին տակ:
 Ու երբ տեսնենք հայ տառերով ընդլեզուած մի մատեան
 Ուր բարբառի աստուածախօս վսեմ լեզուն հայկական,
 Զերմ համբոյրներ տալով անոր մէն մի տողին սրբազան
 Հպարտ սրտով յիշենք ընդ միշտ Աշտիշատն ու Օշական:

Ե. Գարահիսար

Ա. ՏՈՒՐԻԿԵԱՆ

ՄՈՌՑՈՒԱԾ ԷՋԵՐ

Սրբոց Թարգմանչաց՝ Սահակայ եւ Մեսրոպայ
տոմարն առեալ, զորս կատարեց եւ. օր
Հայ եկեղեցին, գրական պղտիկ հասոյք մը
բախտի ըլլայ ընծերցողին՝ Ամեն. Տ. Եղիշէ
Ս. Արքեպ. Դուրեանի յետագայ զմայելի
էջը. —

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

1898 Հոկտ. 26ին՝ պիտի այցելէի Օ-
շականի եկեղեցին, Ս. Մեսրոպի դամբա-
րանովը կրկնակի նուիրականացած այդ
սրբավայրը, երկու օր առաջ սիրտս տը-
րոփման մէջ էր. միամիտ ու անպայման
երկիւզածութենէ մը բնութեամբ՝ գերագոյն
վարժապետին ռաբբ պիտի երթայի. —
Ճամբուն վրայ յանդգաստից փոխադրուած
հեռաւոր թուականի մը այն սրտաճմիկ
ժամուն՝ ուր խաչանիչ շողիւնով արտա-
փայլող զապաղ մը կը տարդէր՝ աշա-
կերաներու սգաւոր խումբի մը ու աշ-
խարհական ամբոխի մը երգերովն ու հեծ-
կատութեամբ, երեւակայութիւնս տխուր
վայրերուն ամայութիւնը սգազարդեց մե-
ռելական հանգէսի մը զիւթական պատկե-
րովը, որ պարկեւորու հողմաճայն թեւե-
րուն վրայ կը հետեւէր սուրացող կառ-
քիւ. Բայց այդ անուշ պատրանքը լուծ-
ուած էր, երբ կառքէն իջած՝ Օշականի
քարտէրունէն վեր կ'ելլէի մտախոհ ու
սրտաթուկ:

Դիւղի եկեղեցին հասած՝ ներս մտայ
ստորերկրեայ փոքրիկ մատուռէն, որուն
աջակողմը կը տեսնուէր զամ ու անշուք
դամբարանը. անդիմադրելի այլայլում մը
խզովեց զիս, չէի ուզեր հաւատալ թէ ա-
նոր ներքեւ փոշի դարձած ոսկորներ կե-
նային. ինծի համար Մեսրոպն՝ ապրող ու
զրապէս ներշնչող հոգի մըն էր. ափ մը
հողի տակ ինչպէս կրնային թաղել կեն-
դանի գիրը, Անթարգմանելի հակասու-
թեամբ մը ընդլիզած բոլոր էութիւնս՝ խուզ
բրթնելուն մը կը հանէր իր խորերէն.
անմահներու ճակատագիրը ծաղրելու հա-
մար սարքուած կատակ մը կը թուէր ին-
ծի այդ մարմարինէ կափարիչը:

Հարկ էր սակայն մօտենալ անոր,
ծնրադրել ձոյլ հիացումի մը մէջ, ու
համբոյրի տաք շրթունքներով քարի մը
պաղ երակներուն մէջէն ծծել հոգեկան
կայծեր՝ երկայն դարերով իրենց կրակին
անշէջ պահող նուիրական նշխարներէն:

Յետոյ սեւեռուած ափսոսանքով մը
տամիկովուով՝ որ ուշակորոյս նուազումի
մը կրնար տանիլ զիս, ցնորակոծ դիպե-
ւումի մը հեշտ վայրկեանները զգացի Մին-
չեւ այն ատեն, հոգիներու հետ ապրիլ սի-
րեցի, հիմա ոգի մը տեսնելու դադարաբեկ
ժպտէր ինծի. Զեմ պիտեւ թէ ինչ տեսակ
անսովոր ունայնացումի թալուկ մը՝ կա-
պոյտ շրջումով մը կը պատէր հոգիս, ու
ես երջանիկ պիտի ըլլայի եթէ ամէն բան
լռէր իմ մէջ ու շուրջս, անմիտ հպար-
տութեանս հետ՝ որ արդէն կծկուած ու
խորտակուած՝ խոնարհագոյն գետնի մը
վրայ դամած էր զիս: Ահ, այդ ցնորքը՝
դիտակցութեանս բոլոր տարիներուն հետ
պիտի չուզէի փոխանակել: Պէտք չէր որ
երազի մը չափ՝ բանդաղու շանքն ալ մեր
մտաւոր կեանքի մէկ պայմանն ըլլար:
Ի դժուար սպասեցի տակայն աղայ մարդկու-
թեան թաքուն կողերուն մէջ սաղմոյ
ջլախտի մը հրաշայիթին. անողոր իրակա-
նութիւնը՝ պատերու թանձրութեան ու
քարին կարծրութեան վրայ կրթում՝ նոյն
կը մտար միշտ աչքիս առջեւ: — Զգայ-
նական այդ վրդովումիս մէջ ու արեւոյ
ու բոպիկ մանկութեանս գեղնած ու վե-
հերոս վայրկեանները հոս դարձած էին:
Այբուբենի առաջին դասիս վիշտը կսկիծի
մը խայթովն արթնցած՝ անհուն տենչանքի
մը փոխում էր կուրծքիս տակ. ու եթէ
Մեծ Վարդապետին ստուերագիծ ձեռքը
տեղնէի գէթ՝ ոսկի տառերով մագաղաթի
մը վրայ, կամ աննման Բանաստեղծական
գոհար գիրքով զարդարուած լանջուպա-
նակ տախտակը գէթ տեսնէի, առաջին
ու անդիտակից շարժումս պիտի ըլլար ան-
գամ մըն ալ ծնրադրելու ու թախանձագին
խնդրել իրմէ: — Աղուոր Ա. Բ. Դ. էդ
դաս մը առաջ ինծի:

ԵՂԻՇԷ ԱՐԲ. ԴՈՒՐԵԱՆ

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

Ա.

— Բայց լաւ չեմ ըմբռներ թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ ձեր հաւատքը :

— Քրիստոսի վարդապետութեան համաձայն ապրելու մէջ :

— Ի՞նչ է այդ վարդապետութիւնը :

— Քրիստոս հետեւեալ առակը կը պատմէ . — «Այգեպան մը այգի մը կը մշակէր որ անկաւած էր սեփակահատէրի մը կողմէ, եւ պարտաւոր էր այգիին պատուին անոր տալ : Մենք, աշխարհին վրայ ապրողներս, այդ այգեպաններուն պէս ենք, եւ պարտաւոր ենք հարկ վճարել Աստուծոյ, որպէս զի իր կամքն ըլլայ : Բայց անոնք որ այս աշխարհին վրայ կ'ապրէին, իր առակին համաձայն, երեւակայեցին թէ այգիին իրենց կը պատկանի, թէ պարտաւոր չեն ունէ հարկ վճարելու եւ կրնան իւրացնել այգիին պատուները : Այգիին տէրը ծառուն զրկեց տուրքն ստանալու համար, բայց այգեգործները վնասեցին սպասաւորը : Յետոյ տէրը իր զաւակը զրկեց, բայց այգեգործներն սպաննեցին զայն, մտածելով որ այնուհետեւ ա'լ ոչ ոք պիտի միջամտէ Ահա ասոնք են սկզբունքները բոլոր անոնց որոնք կ'անգլխտանան ճշմարիտ հաւատքը, այդ սկզբունքները սխալ հոչակած է Քրիստոս : Ամէն մարդ պէտք է իր տուրքը վճարէ, հակառակ պարագային պիտի վրոճնտուի այգիէն : Քրիստոս հասկցուցած է մեզի թէ որքան չնչին բան է մեր հոգոյք կոչածը, եւ թէ ճշմարիտ երջանկութիւնը իր կայանայ Աստուծոյ կամքին համաձայն վարուելու մէջ : Այս է մեր վարդապետութիւնը, եւ ասոր համար կը մերժենք երեւոյթը իրականութեան տեղ ընդունելու : Գիտենք թէ երջանկութիւնը հաճոյքին մէջ չի գտնուիր, այլ Աստուծոյ կամքը կատարելուն մէջ, եւ ուստի վարձատրութեան յոյսի : Մեր ապ-

րելու եղանակը կը համաձայնեցնենք այս զմայլելի համազուտին : Մեր Տէրը ըսած է մեզի . — «Եկէք ինծի ո՛վ յոգ՝ածներ ու բեռնաւորներ, եւ հողիի հանգիստը պիտի տամ ձեզի» :

Այսպէ՛ս խօսեցաւ Պամփիլիոս : Յուլիոս ուշադրութեամբ մտիկ կ'ընէր : Թէեւ կատարելապէս չհասկցաւ իր բարեկամին ըսածները, բայց շատ զգածուեցաւ անոր խօսքերէն : Պահ մը կասկածած էր թէ զինքը կը խաբէ : Բայց շեշտակի դիտելով անոր զէմքը, եւ անոր աչքերը՝ որ բացարձակ անկեղծութիւն մը կ'արտայայտէին, մոտմեց թէ Պամփիլիոս ինքը խաբուած է անգիտակցաբար :

Այս վերջինը հրաւիրեց զինքը՝ Քրիստոնեաներու համայնքին մէջ գալ, տեսնելու թէ կեանքն այս եղանակը կը յարմարի՞ իրեն, եւ ի հարկին անոնց մէջ ապրիլ կեանքին մնացեալ օրերը : Յուլիոս խոստացաւ : Բայց կեանքի փոթորիկներէն մղուած, չուտով մոռցաւ իր բարեկամը եւ անոր բոլոր ըսածները : Կարծես բընադդաբար կը վախնար որ մի գուցէ Քրիստոնեաներու կեանքը չափազանց հրապուրիչ ըլլար, եւ ինքը վերջ ի վերջոյ անկարող զանուէր դիմադրելու անոնց օրինակին : Արդ, հաճոյքն ա'յնքան կը սիրէր որ չէր կրնար ատկէ հրաժարելու որոշում տալ : Հեռեալապէս՝ իր բնածին թեթեւամտութեամբ՝ կը փնտրէր վնասը Պամփիլիոսի յիշատակը :

Ուստի ունէ առիթ ձեռքէ չփախցուց, այսպանելու եւ զատապարտելու համար Քրիստոնէից ընթացքը, ինքզինքը համոզել ջանալով որ չհրապարակի անոնց առաքինութիւններէն : Երբ զանոնք շուկան զբաղած կը տեսնէր պտուղ կամ բոռնջարեղէն վաճառելու, կ'ըսէր անոնց .

— Դուք կը պնդէք թէ որեւէ բանի սեփականատէր չէք, եւ սակայն երկրի բերքերը կը ծախէք դրամով, փոխանակ բոլոր պէտք ունեցողներուն տալու առանց սեւէ փոխարինութեան : Դուք խաբուած, սխալած էք եւ ուրիշներն ալ կը խաբէք :

Այս խօսքերն ընկէ ետքը, մտիկ ընել

(1) Շար. տես Թիւ 22, 23, 24:

խակ չէր ուզիր անոնց պատասխանները՝ ինքզինքնին արդարացնելու համար : Երբ լաւ հալուած Բրիտանոյեայ մը կը տեսնէր, կ'ըսէր թէ ինքզինքին կը հակասէ , քանի որ իր հագուստը ուրիշներուն չի տար : Իր վրդովեալ հոգին հանդարտելու համար, պէտք էր որ Քրիստոնեաներն անիրաւ լալին բացարձակապէս : Եւ որովհետեւ շարունակ կ'ամբաստանէր զանոնք , առանց լսելու անոնց ինքնապաշտպանութիւնը , դիւրաւ կը յաջողէր ինքզինքն համոզել՝ անոնց յանցաւորութեանը մասին : Զանոնք փարիսեցիներ կը նկատէր , կեղծաւորներ , խօսքի մարդիկ որ դործի անցնելու կորով չունին : Հաճոյք կը զգար իր վարմունքն անոնցին հետ բաղդատելով եւ կ'ըսէր .

— Գոնէ ես իմ համոզումս եւ հաւատքիս համաձայն վարմունք մը ունիմ , մինչդեռ դուք ուրիշ լաւն կ'ըսէք եւ ուրիշ կերպ կը գործէք :

Այս կերպով վերջ ի վերջոյ յաջողեցաւ հանդարտեցնելու իր միտքը : Ա՛յ չմտածեց ատոր վրայ , եւ շարունակեց ապրիլ ինչպէս անցեալին մէջ :

Բ.

Բնութիւնն օժտած էր Յուլիոսը քաղցր եւ համակրելի նկարագրով մը : Բայց , իր ժամանակին եւ իր երկրին երիտասարդներուն մեծամասնութեան նման , տէր էր չափ մը գերիներու զորս յաճախ կ'պատժէր բարբարոս եղանակով մը , երբ իր հրամանները չէին գործադրեր , կամ երբ պարզապէս սրտնեղութիւն մը կ'ունենար : Ծքեղ հաղուստներու եւ ուրիշ հետաքրքրաշարժ առարկաներու հաւաքող մըն էր , եւ շարունակ կ'աւելցնէր իր հարստութիւնը , կը սիրէր թատերական ներկայացումները եւ ուրիշ մրցահանդէսները , Հոմանուհիներ ունէր , եւ յաճախ իր բարեկամներուն ընկերակցութեամբ ճոխ կերութեամբներով կը յղժանար : Մէկ խօսքով իր կեանքը կ'անցընէր զուարթ անհոգութեան մը մէջ , կը զուարճանար միշտ , ախպէս որ ազատ վայրկեան մը չէր ունենար՝ խորհրդածութեան նուիրելու համար :

Երկու տարիներ անցան այս ըստ երեւոյթին սքանչելի կեանքով , եւ Յուլիոս հետեւեցուց թէ իր կեանքին բոլոր տարիներն ալ միեւնոյն կերպով պիտի անցնին : Բայց կը խաբուէր , մտաւ շուտով կը ձանձրանայ , երբ հաճոյքը միակ նպատակը կը նկատէ իր գոյութեան , եւ երբ անկանոն, ապօրէն հաճոյքներէ կ'ախորժի : Սկիզբները կը բաւականաւոր մէկ երկու գաւաթ լաւ գինիով , բայց ի վերջոյ աւելի յաճախադէպ գինարբուքներու պէտքն զգաց , միեւնոյն զուարթ ժամանցը հայթայթելու համար : Միեւնոյն բանն եղաւ իր բարեկամներուն համար : Հաճոյքի միակ ընկեր մըն ալ չբաւելով իրեն , մէկ քանի ընկերներ առաւ , եւ սկսաւ անոնց ընկերակցութեամբ ինքզինքը տալ ոեղանի չափազանցութեանց : Յետոյ կորցը սիրունիներու եկան ուրոնցմէ քիչ յետոյ կը ձանձրանար , հետեւապէս պէտք կ'ըլլար փոխել : Նոյն բանը եղաւ ամէն կարգի ժամանցներու եւ զուարճութիւններու համար : Բայց անոնք դէ՛ չ ունակութիւններ են , կրնանք ըսել՝ մոլութիւններ , որ չափ սուղի կը նստին :

Յուլիոսի հայրը հարուստ էր , սաստիկ կը սիրէր իր զուակը , եւ կը հպարտանար անով : Հետեւորար անհաշիւ կը բանար իր քսակը , որպէս զի կարենայ գոհացնել բոլոր իր քմահաճոյքները : Ուստի Յուլիոս , իր հօրը այս ակարութենէն քաջաւերուած , իր ժամանակը կ'անցընէր զուարճանալով եւ ծուլութեամբ : Եւ սակայն այդ զուարճութիւնները չափ սուղի կը նստէին , եւ շուտով ցամքեցուցին այն աղբիւրն ուրկէ կը հոսէր զբոմը : Օր մը երիտասարդը մեծ գումար մը պահանջեց հօրմէն , որ յանդիմանեց զինքն իր շտալութեան համար : Երիտասարդը կը զգար թէ յանցաւոր էր , բայց չուզեց ճանջնալ իր յանցանքը , եւ համարձակեցաւ անպատկառ լրբութեամբ մը պատասխանել իր հօրը : Այս վերջինը հուսկ ուրիմն վըճարեց պահանջուած գումարը քր շուտով մոխուեցաւ : Քանի մը օր վերջը , Յուլիոս՝ գինարբուքէ ետքը պատահած կոխի մը միջոցին մարդ մը սպաննեց : Քաղա-

քին կառավարիչը՝ խնդիրն իմանալով՝ բանաբ գրաւ Յուլիոսը ։ Բայց իր հայրը , բազմաթիւ դիմումներէ ետքը , յաջողեցաւ բանտէն ազատել զաւակը ։ Հազիւ արձակուած , Յուլիոս վերականաւ իր ապերտասան կեանքը , եւ հարկադրուեցաւ աւելի յաճախակի դիմումներ ընել իր հօրը առատաձեռնութեանը ։ Նոյն իսկ բարեկամէ մին ալ փոխ զրամ առաւ եւ չվճարեց ։

Օր մը իր սիրուհին մարգարիտէ մանեակ մը ուզեց , եւ սպառնաց որ եթէ չըտայ , զինքը կը լքանէ եւ կ'երթայ իր մրցակիցին հոմանունին կը դառնայ ։ Յուլիոս այս տնգամ գնաց մայրը գասու , եւ ըսաւ անոր որ եթէ չկարենայ հայթայթել իրեն պէտք եղած զրամը , կ'եռնիք Վերջ պիտի տայ ։ Ամէն յանցանք իր հօրը կը վերագրէր , ըսելով . «Անկախ զիս պերճանքի մէջ մեծցուց , եւ հիմայ այդ պերճանքը պահպանելու անհրաժեշտ զրամը վճարելու համար սակարկութեան կ'ելլէ ։ Եթէ սկիզբէն ընէր ինչ որ վերջն ընել սկտաւ , ես չպիտի հարկադրուէի վաշխառուներու դիմել՝ դիքս պահպանելու համար իմ դասակարգիս պատկանող հրիւսասարդներու մէջ ։ Հայրս չուզեր ինքզինքն իժաեղս զնել եւ նկատի առնել իմ կացութեանս զօտարութիւնները , կը մտնայ որ ինք ալ երխասարդ եղած է ։ Յանցանքն իրն է եթէ ես այս վիճակին հասայ , եւ եթէ ես չգտնեմ ինծի պէտք եղած զրամը , անձնասպան կ'ըլլամ ։ Ահա այսչափ կ'ընեմ ։ »

Մայրը , որ չփառացած էր զաւակը , վաղեց ամուսնոյն քով գնաց , եւ անոր պատմեց Յուլիոսի ըսածները ։ Այս վերջինը կանչել տուաւ զաւակը , եւ դառն յանդիմանութիւններ ըրաւ անոր ։ Յուլիոս լրբօրէն պատասխանեց ։ Հայրը զարկաւ զաւակին , որ կատաղութենէն կուրացած , ձեռք վերցուց հօրը վրայ ։ Հայրը կանչեց գերիները , եւ հրամայեց որ կապին զաւակը եւ խցարիլ ընեն ։ Յուլիոս միամիտակ մնացած , անիծեց իր հայրն ալ , կեանքն ալ , իր գլխատութեանց վերջ պահելուն միակ միջոց նկատելով հօրը միանիլը Մայրը շատ աւելի կը սքստապէր , եւ ցա-

ւին սաստկութեանը մէջ չէր կրնար որոշել թէ ո՞րուն քով էր յանցանքը ։ Դրժբախտ զաւակին հանդէպ գութի եւ կարեկցութեան անդիմադրելի զգացումէ մը մըղուած , նորէն ամուսնոյն քով գնաց եւ պսղատագին խնդրեց որ ներէ Յուլիոսի ։ Ամուսինը խուլ մնաց անոր թախանձանքներուն , եւ խստիւ յանդիմանեց զայն՝ ըսելով որ իր զաւակին դէշ ունակութիւնները կը քաջալերէ . եւ ատով ալ չգոհանալով նոյն իսկ ծեծեց իր կինը ։

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

ԿԸ ՍԻՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ազգի մը գոյութիւնը պահող պահպանողը , զայն բարոյական , նիւթական , քաղաքակրթական կատարելութեան առաջնորդողը կուսակցութիւնն է ։ Կուսակցութիւններու հակընդդէմ պայքարներով է որ պաշտօնական մարմիններ , իրենց ղեկավարութեան մէջ թէպէտ կը սայթաքին , ուղղութենէ կը խոտորին , կը խորեն , կը կեղծեն , կը ստեն , բայց անմիջապէս խնդրոյ առարկայ կը դառնան ։ Կը դատափետուին , կը քննադատուին , կը նախատուին , կը յանդիմանուին , եւ վերջապէս կը լուսաբանուի խնդիրը , ու ամէն ոք իր արժանի պատիժը կամ պատիւը կը վերստանայ ։ Եթէ հետաքրքիր կուսակցականներէ կը խրաչինք , հարկաւ մեր գործերուն մէջ թերութիւններ ունինք զորս՝ կ'ուզենք լուելեայն պարտկել ։ Առանց կուսակցութեան ապրող ազգ մը , հանգարտ լիճ մըն է , որ իր կայուն վիճակով թէ ներքեւը նեխած , թէ ջուրը հոտած եւ թէ մակերեսը ծածկուած է անհամար աղտերու թիւններով . ընդհակառակն կուսակցութիւններով ապրող ազգեր ծովերու կը նմանին . հակառակ հովերու կուրծք կուտան , կ'ալեկոծին , ամենհի ալիքներ ժայռերու զարնուելով կը փշուրին , փրփրադէզ կոհակներ կը յարձակին ցամաքային եզրերը , կը պղտորին եւ հուսկ ուրեմն

կը դադրին, ու հանդարտիկ կը ծփան բնութեան օրօրովը մաքուր ու վճիտ:

Ա՛րնդունիմ թէ ծովեր, երբեմն իրենց անդունդներէն անպարտկելի նիւթեր կը ժայթքեն, և այդ պարագային անհամար կենդանիներ զոհ կ'երթան ահարկու կատաղութեանը, բայց նա, ծովը, ո՛չ իր շրջանէն դուրս կ'ելլէ, ոչ ալ իր մէջ պատսպարած բիւրացի կենդանիներէն կը զրկուի. միայն թէ իր սրտին վրայ սպի մը. իր կուրծքին վրայ վէրք մը կը ստեղծէ որ, սակայն, օգտակար կ'ըլլայ իրմէ դուրս ապրող ամենազգի կենդանիներու:

Այո՛, մենք Հայերս ալ ծովու վերածած ենք լիճը. պէտք չէ գանգատիլ, պէտք չէ լուել, պէտք չէ չեղոք մնալ, պէտք չէ ֆէն ընել, պէտք չէ յապուշ կրթիլ. ամէն դասուորում իր կուսակցութիւնը պէտք է ունենայ, կրօնականը, տնտեսականը, կրթականը, քաղաքականը ևն. ևն. պէտք է մաքառի, պայքարի միշտ հանրութեան, ազգին, ժողովրդեան օգտակար ըլլալու, անոնց սրտին մէջ սէր առ Աստուած, սէր առ ընկերն զրոշմելու, անոնց ապրելակերպին, դիւրակեցութեան համար աշխատանքի միջոցներ ստեղծելու, անոնց գիտական, արհեստական ուսման համար զոհողութիւններ ընելու: Ահա այս և այսպիսիներ պէտք է ըլլան կուսակցականներու ջանք ու նպատակը: Ի վնաս ուրիշի աշխատող կուսակցութիւնը չէ կարող շահիլ, կը տուժէ: Պօզոսը թող ցանէ, Ապօղոսը թող ջրէ, ան կ'արմատանայ, կ'ուռճանայ, լաւ ու համեղ արդիւնքներ կ'արտադրէ: Նախանձը թող չպակսի կուսակցութիւններու մէջ. «Նախանձաւոր լերուք շնորհացն որք լաւքն են»: Ամէն կուսակցութիւն իր կարգին մէջ մէկ ճիւղ թող ընդգրկէ շինիչ ու օգտակար: Կուսակցութիւնները ազգին բարեացակամութեանը ցանկութիւնով պէտք է տոգորուին, ընկերութիւններ կազմեն՝ մղում տալու իրենց պատկանած կուսակցութեանը: Ատելութիւն, վրէժխնդրութիւն պէտք չէ ըլլայ կուսակցականներու կէտ նպատակին: Ազգին եւսը անհատականութեան

վերածելու չէ: Պէտք է նկատի առնել համիտեան ժամանակները երբ, այնքան հալածանքներու մէջ, մահուան երկիւղներով պաշարուած, արեան լիճերու մէջէն խակ Ազգ, Կրօն ու Հայրենիք կը պոռայինք: Ինչո՞ւ սա դեռահաս ազատութեան օրերուն մէջ մոռնանք անցեալը, ուրանանք ներկան ու սպաննենք ապագան:

Տիեզերքի վրայ կայ ո՛ր և է ազգ մը, ժողովուրդ մը որ կրօնի մը կրթնած չըլլայ. հեթանոս ազգերն ալ իրենց կրօնն ու հաւատալիքը ունին: Ազգմը, ունի անպատճառ իր հայրենիքը, և ազգի մը գոյութիւն տուողը իր կրօնակուսակցային կազմակերպութիւնն է: Գնչուններն անգամ իրենց հաւատալիքն ու պաշտամունքը իրենց ապրած միջավայրին հետ կապած են: Ուրեմն յարգենք, պատուենք ու պարծանքով պաշտենք մեր Ս. Կրօնը: Մանաւանդ մենք, քահանաներս, Աւետարանի պաշտօնեաներս, մեր պարտականութիւնները արդիւնաւոր կերպով կատարելու համար, կուսակցութիւններ պէտք է կազմենք, նախանձախնդիր ոգիով աշխատինք մեր Ս. Եկեղեցւոյ բարձրութիւնը աւելի պանծացնելու. ու քահանայական դասը իր բարոյական անկումէն վերականգնելու համար:

ԽԱՉԱՏՈՒՐ ՔՀ. ՊՕՂԻԿԵԱՆ

Հայրէպ

Կարապետեան երկսեռ վարժարանաց մրցանակաբաշխութեան հանդէսը, անցեալ կիրակի օրը, ցուցուց թէ նոյն վարժարանաց հիմնադիր-տնօրէնը՝ Պետրոս էֆ. Կարապետեան, ո՛ր աստիճան գիտակցօրէն և հոգեւին փարած է գործին: Վարժարանն ընծայեց այո տարի 53 շրջանաւարտ որոնց ծը աղջիկ. աննախընթաց իրողութիւն մը մեր կրթական տարեգրութեանց մէջ: Կարապետեան էֆ. ջերմապէս շնորհաւորութեամբ բազմաթիւ ներկաներէ, ի մէջ այլոց Սփիւտարի կառավարիչ պէյէն Օսմ. տարրերու համերաշխութեան աշխատելուն համար: Յաջողագոյն աշակերտ ստացան՝ Մէարիֆի պաշտօնատունէն զրկուած թանկագին առարկաներ և գրքեր, և թաղապետութեան կողմէ նշխրուած երկու ոսկի ժամացոյց:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

Զարսանճագիւնէր կը հարկադրուի ռուսադաւանութիւնն ընդունիլ. — Իսաւառներու կայսրութիւնը տիրու է միշտ Այս անգամ Զարսանճագէն կուգան սրտակեղեք տեղեկութիւններ: Ժողովրդիս երթարկուած հարստահարութիւններն այն տատիճան ծանրակշիւ հանգամանք առած են, որ ուրիշ ճար չէ մնացած իրենց, եթէ ոչ ռուսադաւանութիւնն ընդունելու որոշում տալ: Ահաւասիկ առաջն. փոխանորդ Տ. Համադասպ Վ. ի վերջին հետադիւր, ծանրակշիւ եւ պերճախօս. — «Ժողովրդեան երթարկուած անտանելի վիճակն ոչ միայն վերջ չգտաւ, այլ եւ աւելի սաստկանալու վրայ է: Գիւղերէն ամէն օր հարստահարութիւններու լուրեր կը հասնին: Հարստահարեալները թէեւ կառավարութեան կը դիմեն, կը վճռաւորին եւ հարստահարիչները բացարձակ կերպով կը քաջտիրութիւն կատարութեան կողմէ: Ազաները ժողովուրդը յուսահատեցնելու համար Տէրսիմի լեռներէն քուրդեր բերել տալով, զանոնք կը զինեն եւ գիւղերու մէջ կը պատգուսնեն: Հողագործ ժողովուրդը առններուն մէջ պահուրտած՝ չի համարձակիր դուրս ելլելու: Կառավարութեան նպատակն է հողային խնդիրը բոլորովին խափանել, եւ այս կերպով կ'ուզէ ի վրէժն հանել: Կուսակալութեան կեդրոնէն տրուած հրամանի մը վրայ մագպարա մը կը պատրաստուի, յայտարարող թէ աղաներու ձեռքը՝ Հայերու կողմէ տրուած վարձակալութեան թուղթեր կան: Իտարէի ժողովին հայ անդամները կ'առարկեն որ՝ եթէ կան՝ այդ թուղթերը պէտք է բերուին եւ ցոյց տրուին, բայց Հայ անդամներուն այս առարկութիւնը անլսելի մնացած է: Ժողովուրդը ասկէ անտեղեկ է բոլորովին, եւ աղաները պաշտպանելու համար հետրուած բան մըն է: 15 եւ 17 թուակիր մօր հեռագիրներուն պատասխանները չստացանք: Ամբողջ ժողովուրդը զրգոտած կը պատրաստուի Օրթոտքութիւնը ընդունիլ: Առ այժմ շատ դժուարաւ իր այս նպա-

տակէն ետ կեցնել տուի: Սովայն կացութեան առաջը չուրի կարենամ առնել, եթէ իրենց համար զոհացուցիլ լուր մը չառնուի: Անհամբեր լուրի կը սպասեն:»

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ, անցեալ նիստին մէջ շատ խնդիրներ չօշտփեց, առանց անոնց ոչ մէկը լուծելու: Տ. Հրմայեակ Արքեպ. Բանկալարի գերեզմանասան խնդրոյն մասին բացատրութիւններ ուղեց Վարչութիւնէն, որ մերժեց՝ ըսելով թէ կանխահաս է: Ար. Գասպարեան եւ Պարչեւ Փափազեան էֆ.ները կ'առաջարկէին ձեռնարկել Երուսաղեմի Պատր. ընտրութեան: Վաւառն էֆ. կանխահաս նկատեց այդ առաջարկը: «Պէտք է վերջանայ, ըսաւ, այն քանակն ու երուսաղէմի խնդիր կը կոչուի, որպէս զի մի՛ գոցե այս ժողովը Պատրիարք ընտրելու իսկ պատասխանատուներէն մէկը»: Թեր ու դէմ վիճարանութիւնէ ետքը, որուն մէջ անձնակազմութեան ճշդիմ խնդիրներ ալ մտան, որոշուեցաւ առաջարկը զրկել Վարչութեան նկատառութեան: Զօհրապ էֆ. գրով մը Սահմանադրութեան վերաբերեալ իրենց կը պահանջէր: Թեր ու դէմ յայտնուած կարծիքներու պահուն շեշտուեցաւ ներկայ պայմաններուն մէջ, — երբ Պատրիարքութեան ծանր բանակցութեան մէջ է, — ձեռքերնիս զանուած օրէնքը խնդրոյ առարկայ ընելու վտանգաւոր հանգամանք, եւ որոշուեցաւ, ըստ օրինի, այդ առաջարկը նախաձեռնութեան Իւստինյոյէ, Ժողովը յետոյ որոշեց չկարդալ Թիֆլիզէն 101 առեւտրականներու ստորագրութեամբ գիրը՝ Օրմանեան Ս. իւրեղիրը ժամ առաջ ըննելու մասին, որովհետեւ ստորագրութիւնները վաւերացուած չէին Ազգ. իշխանութեան կողմէ: Յետոյ ժողովն անցաւ օրակարգին, որ էր Բաղ. Ժողովոյ չորս պակասեալ անդամաց ընտրութիւնը: Վահան էֆ. Թէքեան, յանուն Կեդրոնի կուսակցութեան յայտարարեց թէ օրակարգի այդ խնդիրն յետաձգելու մասին Ազատականաց եւ Կեդրոնի խմբակցութեան միջեւ բանակցութիւններ

եղած եւ համաձայնութիւն գոյացած է, համերաշխութիւնը պիտի պահպանուի, ասկէ ետք ալ: Ուրախառիթ յայտարարութիւն մ'էր այս, զոր շեշտեց Հմ. Խոսրովեան էֆ., ըսելով թէ համերաշխութիւններ կրնան գոյանալ երբ մասնաւոր պաշտպանուելիք ընդհ. շահեր կան, եւ ազատական կուսակցութիւնը միշտ պատրաստ է ձեռք երկարելու, երբ այս տեսակէտով ոեւէ առաջարկ գայ իրեն: Ազգ. Վարչութեան Ատենապետ Յակոբ էֆ. Սթամպուլուեան ինդակցութիւն յայտնեց գոյացած համաձայնութեան համար, եւ յետոյ յայտարարեց թէ Վարչութիւնը քննելու վրայ է գաւառ. գէպերու առաջին առնելու համար պատրաստուած ծրագիրը, որ ի մօտոյ պիտի ներկայացուի ժողովին Այս առթիւ յայտարարեց թէ անհիմն է ժամանակի հրատարակութիւնը՝ այդ ծրագրին նկատմամբ. անհիմն է նաեւ Պատրիարքարաններու հետ համերաշխ գործելու բանակցութեանց խղումը:

Երեցեան Ս. ի համար խորհրդարանական յանձնաժողովի ընտրութիւնը երկարապատում վիճաբանութեան գուռ բացաւ այս անգամ ալ, ու նորէն որոշում մը չընտրուեցաւ: Այդպիսի յանձնաժողովի մը ընտրութիւնը օրինական չլլալը պնդեց Շահրիկեան էֆ.: Բուռն վիճաբանութիւններէ ետքը, — որու միջոցին էսմէրեան էֆ. նորէն պնդեց անառկներու բովանդակութիւնը հրատարակուելու պէտքին վրայ. — ժողովը սրբազրեց նախորդ նիստի որոշումը, եւ ընդունեց այն առաջարկը թէ պէտք է սպասել նախաձեռնութեան Դիւանի տեղեկագրին, եւ եթէ վաւերանայ ընտրութիւնը, այն ատեն ընտրել խորհրդարանական յանձնաժողովը:

Երեք չորս ժամ տեւող նիստի մը մէջ, եւ աղմկուից վիճաբանութիւններէ ետքը, միակ գոհացուցիչ իրողութիւնը որ երեւան եկաւ, համերաշխութեան վերահաստատումն է: Երեսփ. ժողովի Կեդրոնի եւ Ազատական կուսակցութեանց մէջ: Յուսանք որ տեւական եւ արդիւնաւոր ըլլայ այդ համերաշխութիւնը:

ԵԷՏԻՎՈՒԼԷԻ Երուսաղէմապատկան ազարակը, որ հանդուցեալ Տ. Յակոբոս Վ. Շահպաղլեանի անուան արձանագրուած էր, անոր մահովը էվգաֆի նախարարութիւնը իբր մահիւլ գրաւել ուզած, եւ վերջերս ալ 30,000 ոսկիի ծախելու ձեռնարկած ըլլալով, Երուսաղէմի Պատր. Իսխանորդ Տ. Սմբատ վրդ բողոքեց թէ, Դատական նախարարութեան եւ թէ Վարչութեան, եւ հեռագրեց Երուսաղէմի Տեղապահին: Խառն ժողովը Դ. օրը այս ինդրոյն վրայ լուրջ խորհրդակցութեան մը ետքը, որոշեց թաղրիբով մը գրել էվգաֆին, հաստատելով վանքին անբռնաբարելի իրաւունքը:

ԿԻԼԻԿԻՈՅ Ս. Կաթողիկոսը հայրապետական նախորդ ընտրութեան չէր մասնակցած, ինչ ինչ դիտողութիւններով, որոնք էլ միաժամայ Կաթող. տեղակալին հաղորդուելով, տառաջարկուած էր փոխանակ երկուքի, իրաւունք տալ աւելի թուով պատգամաւորներ զրկելու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Վիճակներուն Այս անգամ Ս. Էմիւսի Սինօղը պատասխանած է թէ 1884 թուականին ներքին գործոց նախարարութեան որոշմամբ կարելի չէ տարբեր կարգադրութիւն մը ընել: Խառն ժողովը վերջին նիստին մէջ որոշեց հայրապետական հրաժարելը զրկել Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, եւ դիտել տալով որ Եկեղեցւոյ միութեան պէտքը եւ օգուտը կը պահանջեն որ Կիլիկիա անմասն չմնայ Հայոց բնդհանրական Հայրապետի ընտրութենէն, խնդրել որ հաճի Կիլիկիոյ համար սահմանուած մէկ եկեղեցական եւ մէկ աշխարհական պատգամաւորի ընտրութիւնը կատարել եւ տեղեկագիրը զրկել:

ԻԶՄԻՐԵԱՆՑ Գրական յանձնաժողովը իր պաշտօնավարութեան լրման առթիւ հրաժարած ըլլալով, Խառն ժողովը վերականգնեց զայն, անգամ կարգելով Տ. Տ. Եղիշէ Դուրեան եւ Յովհ. Արշարունի Արքեպ.ները, Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալաքեան եւ Դաբրիէլ Նորատունկեան: Տքթ. Սեղբոսեան եւ Վահան Էսաեան էֆ.ները:

ՅԱԿՈԲ ԷՖ. ՍԹԱՄՊՕԼԼՈՒԵԱՆ, Ազգ. Վարչութեան ատենապետը, Հեռագրաց եւ Թղթատարութեան նախարար անուանուելուն առթիւ, Պատր. Տեղապահ Ս. Բ. չ. օր այցելեց ն. Վսեմութեան, եւ տեսակցեցաւ մէկ քանի խնդիրներու վրայ։

ՕՐԱՅՈՅՅԸ երկար ատենէ ի վեր կը պատրաստուէր Մարութէ Յովսէփեանի կողմէ՝ վաճառուելով ի նպաստ Ազգ. Հիւանդանոցի։ Յիշեալը մէկ քանի ամիս առաջ մնում ըլլալով, Հոգարարձաւթիւնն այդ գործն յանձնած է Բերայի աւագերէց Տ. Խորէն քահանայ Յարութիւնեանի, որ տօմարագիտութեան եւ Հայ եկեղեցոյ ծիսակատարութեան մէջ ծանօթ է իր հմտութեամբ։

ԿԱՐԵՒՈՐ ԿՏԱԿ ՄԸ, — Դահլիճարը նակ մեծահարուստ Տիար Գրիգոր Նդիւան, որ նախորդ շաբթու անգամակ մնում է Թրիէսթի մէջ, օրինաւորապէս վաւերացուած կտակով մը 20,000 ոսկի կը թողու Դահլիճի Ազգ. Առաջնորդարանին, եւ 30,000 ոսկի՝ Գալստեան վարժարանին։ Կտակակառար նշանակուած է Վսեմ. Պօղոս փաշա Նուպար։

ՀԱՅԿԱԿԱՆ Բարեգ. Ընդհ. Միութիւնը, մտադիր է Վանէն ուրիշ քաղաք մը հաստատել ծրագրեալ Վարժապետանոցը, նոյն Հաստատութիւնը կուտակեցական պայքարներէ եւ ապագայ կնճիռներէն զերծ պահելու, եւ անոր անկախութիւնը չսահմանափակելու նպատակով։

ՊՐՈՒՍԱՆԻ Առաջն. Տեղապահ կարգուեցաւ Տ. Վարդան Մ. Վ. Գասպարեան։ Իսկ Բաբերդի՝ Տ. Տիւրայր Մ. Վ. Մարգարեան։

ՉՄԻԻՆԻՆՈՅ առաջնորդ Տ. Մատթէոս Մ. Վ. Ինճէեան անցեալ Շբ. օր Պոլիս եկաւ։

ՀԱՅ-ՀՌՈՄԷՍԿԱՆԱՑ ԳՈՐԾԵՐ. — Թիւրքալոյ անցեալ շաբթու զրեց թէ Բ. Դուռը Դատական պաշտօնատան կողմէ կատարուած նախնական քննութենէ մը ետքը որոշած է միջամտել։ Ուստի Դատական Նախարարը թեզիսներով մը կանչած է Հայ-հռոմէականաց Պատր. Տեղապահ Զամճեան Եպ. ր, բացատրութիւն ստա-

նալու համար Թէրզեանի բռնած բռնապետական ընթացքին վրայ։ Նէճմէտտին պէջ բաւական բուն լեզուով մը պահանջած է որ Զամճեան Եպ. համակով մը անմիջապէս Պոլիս հրաւիրէ Թէրզեանը, որպէս զի անհրաժեշտ բացատրութիւնը տայ իր տարօրինակ ընթացքին վրայ։ Տեղապահը երկու յայտնած է որ Թէրզեանի նկատմամբ ալ կրկնուին այն թշնամական ցոյցերը որոնց առարկայ եղաւ Հայոց նախկին Պատրիարք Օրմանեան Ս.։ Նախարարն հաւաստած է թէ այդպիսի բան մը չի պատահիր։ Զամճեան Եպ. Պատրիարքարան զարձած է, երկու համակ գրելու մէկը Թէրզեանի որ Մատրիտ կը գտնուի, կիւրկիոյ Հայոց նպաստ հաւաքելու (• • •), եւ միւսը Վատիկանի Արսաքին գործօց քարտուղար կարդինալ Մէրիտէլ-Վալի, անոնց հաղորդելու համար Օսմ. կառավարութեան միջամտութիւնը։ Թէրզեանի ուղղուած նամակին մէջ տեղապահը բացորոշապէս՝ կը յայտարարէ թէ իր (Թէրզեանի) հետեւած ուղղութիւնը անգունդ մը բացած է իր եւ ժողովուրդին միջեւ։

Դրած է նաեւ, Դատական նախարարին ազդարարութեան վրայ, թէ հոգեւոր պարտականութեան մը համար Հռոմ գացող Պատրիարք մը իրաւունք չունի Բարիդ, Սպանիա, Պրիւսէլ եւն. չըջագայելու ուրիշ նպատակներով։

* Հայ-հռոմէականաց Երեսփ. Ժողովոյ վերջին նիստին հանրադրութեան մը ներկայացաւ, Բերայի եւ Օրթաքէօյի տիկիններու եւ օրիորդներու 50 ստորագրութեամբ, որոնք կը բողոքեն Թէրզեանի ընթացքին դէմ եւ անոր հրաժարումը կը պահանջեն։ Բրգիւրդներն ալ նոյն բողոքը ըրած են զրաւորապէս։

Արտօմատէր ՀՄԱՅՆԱԿ ԲԶՆՅ. ԷՄԵԼԻՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԻՄՐԱԳԻՐ
ՀԱՐՄԱՅՐ ԲԶՆՅ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Դաւառաց՝ տարեկան	40 դրու
Արսասահմանի համար	» 10 ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օլար
Զեռեկ կը ծախուի տարեկան	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է ղիմել առ Զարմայր Բանանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիքաւ, Հայոց Եկեղեցի:

بشيكطاش ارمي كليساسنده « داجار » غزتي مديري پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բենյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՍ. — Տ. Ռուբէն Բենյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Դաֆթեանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բենյ. Պօղար-
եան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բենյ. Տօնէլեան
ԲԱՅԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եսս.
Կիւլիսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բենյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բենյ. Թորոսեան
ԶՄԻՒՌՆԻՍ. — Տ. Յարութիւն Բենյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բենյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջն. որդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաաւէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մարոն էֆ. Թորատեան
ԿԻՒՄԻԼԺԻՆԷ. — Տ. Ներսէս Բենյ.
Նշանեան

ՄԱՐՍԸ. — Տ. Հմայեակ Բենյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒՍՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բենյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բենյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Բէնեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱՂԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլըմեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՄՈՒՐ. — Տ. Մարտի Բենյ. Մըրժ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Սալանեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաշեան
ՍԵՐԱՍՏԻՍ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բենյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բենյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բենյ. Տրէզ-
եան
ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՈՒՍ. — Տ. Գէորգ Բենյ. Թէրզեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վրաճա-
պետ Բենյ. Բիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՅԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բենյ. Դերձակեան
ՅՐԷԶԵՕ. — Յակոբ էֆ. Նշկեան

ՇՈՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՅԻՆՆԵՐ

Գ Է Ո Ր Գ Մ Ե Մ Յ Ո Պ

Ո Ւ Ր Ա Ր Տ Ո Ւ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԿԻՆ

(Ամեն կողմի գնահատում)

Փութացէք գնել որովհետեւ կէսէն աւելին սպառած է արդէն: — 254 էջ, 30 պատկեր, մէկ քարտէս, եւ: Գին 10 ղշ., 2 աբ կէս ֆր. 1 բուրլի. կամ կէս սուլար: Տէ աւելի գնողներուն գոհացուցիչ գնդ: — Դիմել հեղինակին՝ Ատարազար, և Պոլիս՝ բոլոր գրավաճառներուն: 6—1

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Ե Ւ Ր

Պատմութիւնը, Վարդապետութիւնը, Վարչութիւնը, Բարեկարգութիւնը, Առարողութիւնը, Դրամականութիւնը ու ներկայ կացութիւնը.

Գաղղիներէն հրատարակուած եւ այժմ Հայերէնի վերածուած՝ յոյժ չափեկան աշխատանքութիւն մը, բողոքացած 270 միլ. ծաղիւր էջերէ: Դին 15 դրուչ քաթի ծախքով 18 դրչ. կամ 4 ֆր.): Կեդրոնատեղի՝ Վ. եւ Հ. Տեր-Ներսիսեան վաճառատուն, Պահճէ Գարու, Կ. Պոլիս: Կը զանուի նաեւ ամէն գրավաճառներու քով:

ՍԿԶԱՌԻՆԻ ՔԱՂՉԱՐԱԿԱՆ ՏԱՅՈՐԱԿԻՆ. — Դրեց Միհրան Յովհաննէսեան. — Սահուն եւ շատ գիւրադատեցող ռոմով մը պարզուած 45 տնտեսագիտագիտական ամենաբարձր ուղղութիւնները, հոգ տարուելով պատշաճեցնել երկրին

տնտեսական վիճակին եւ պայմաններուն: Հրատարակիչ Յովհ. Դըլքճճեան դրատուն, Պոլիս, Չաղմաղճըլար թիւ 25. Դին 5 ղրչ.:

«ՀԱՅՈՒՆ ԵՐԳԱՐԱՆԸ». — Լոյս տեսաւ Հիսյեակ Արամեանցի ձայնադրուած ՀԱՅՈՒՆ ԵՐԳԱՐԱՆԸ, հոյակապ գործ, 320 միլագիր էջով, 70ի չափ Հայ եւ օտարազգի յեղափոխական ու Ազգ. գործիչներու պատկերներ, Հնչակեան, Դաշնակցական, Ռուս յեղ. երգեր, Քաղաքին, ժողովրդական երգեր: Դին 10 դրչ. (2,50 ֆր., 0,50 սուլար) թղթակազմ, 12 դրչ. լաթակազմ, 15 դրչ. կաշեկազմ Անտք որ ուղղակի հեղինակէն գնեն՝ բոսդի ծախք չեն վճարեր: Մեծաքանակ գնողներու կարեւոր գնդ: Հեղինակին հասցէն՝ Խըմբազրութիւն Կոնակի, Կ. Պոլիս, բոսգարկը թիւ 125:

ԽԱՉՍ.ՏՈՒՐ ԱՔՈՎԵՍՆ. — Դրեց Ներսէս Բահանայ Տ. Կարապետեան, Բագու: Կենսագրական մանրակրկիտ տեղեկութիւններ՝ վերջ Հայաստանի անմահ հեղինակին վրայ, սկսեալ իր մանկութենէն: Տպագր. Տիգրիս, 1911: Դիմել հեղինակին՝ Բագու, կամ Տիգրիս՝ Կեդր. գրավաճառանոց: Դին 75 կոպիկ:

ԴԱՐՄԱՆԸ՝ հոգեւոր կեանքի զարգացման եւ արդիւնի հսկակիտ ջարժիւն: — Հմտալից եւ օգտակար գործ Զմիւռնիոյ Աւետ. Հայոց հովիւ Վեր. Կարապետ Պ. Աղանալեանի: Տպագր. Իզմիր, 1911, Դին 4 դրչ.: